

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ
ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն,
Երաժշտության բաժնի վարիչ
E-mail: annaasatryan2013@gmail.com
Doi:10.58580/18290019-2024.1-2-142

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 15.1.2025 թ.,
ընդունվել է տպագրության՝ 21.1.2025 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 24.12.2024 թ.:
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

**Անգին նվեր կոմիտասագետներին ու կոմիտասասերներին.
լույս է տեսել Կոմիտասի երկերի ժողովածուի երկրորդ
հրատարակության առաջին հատորը**

Անկողմում

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը
լույս ընծայեց Կոմիտասի երկերի ժողովածուի երկրորդ հրատարակության առաջին հատորը, որն ընդգրկում է
Կոմիտասի մեներգերը՝ դաշնամուրի նվագակցությամբ, երկլեզու (հայերեն և անգլերեն) առաջաբանով, Ռո-
բերտ Աթայանի խմբագրությամբ, Մարտիրոս Մարյանի ֆորզացով, որը հրատարակության պատրաստեց Դա-
վիթ Դերոյանը:

Բանալի-բաներ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Կոմիտաս, Երկերի ժողո-
վածու, երկրորդ հրատարակության առաջին հատոր, մեներգերը՝ դաշնամուրի նվագակցությամբ, Ռոբերտ
Աթայան, Մարտիրոս Մարյան, Դավիթ Դերոյան:

Abstract

Director of the Institute of Arts, NAS RA, Doctor of Arts, Professor, RA Honored Art Worker Anna Grigor Asatryan. - "A
Priceless Gift to Komitas Scholars and Admirers".
The first volume of the second edition of The Collected Works of Komitas has recently been published. By the decision of
the
Scientific Council of the Institute of Arts of NAS RA, "Gitutyun" Publishing House has released the first volume of the
second
edition of The Collected Works of Komitas, comprising his solo songs with piano accompaniment, featuring a bilingual
(Armenian-
English) foreword. Edited by Robert Atayan and prepared for publication by Davit Deroyan, this edition includes Martiros
Saryan's forzats.

Key Words: Institute of Arts of NAS RA, "Gitutyun" Publishing House of NAS RA, Komitas, Collected Works, second edition, first
volume, solo songs with piano accompaniment, Robert Atayan, Martiros Saryan, Davit Deroyan.

Абстракт

Директор Института искусств НАН РА, доктор искусствоведения, профессор, заслуженный деятель ис-
кусств РА Анна Григорьевна Асатрян. - «Бесценный дар комитасоведам. Вышел в свет первый том второго
издания «Собрания сочинений Комитаса»».
Недавно вышел в свет первый том второго издания «Собрания сочинений Комитаса». По решению Ученого совета
Института искусств НАН РА издательство «Гитутюн» выпустило первый том второго издания «Собрания со-
чинений Комитаса», в который вошли его сольные песни в сопровождении фортепиано с двуязычным (армяно-ан-
глийским) предисловием. Издание, подготовленное к печати Давидом Дерояном и редактором Робертом Атаяном,
вышло с форзацем Мартироса Сарьяна.

Ключевые слова: Институт искусств НАН РА, Издательство «Гитутюн» НАД РА, Комитас, Собрание сочинений,
второе издание, первый том, сольные песни в сопровождении фортепиано, Роберт Атаян, Мартирос Сарьян.

Նվիրվում է Կոմիտասի ծննդյան 155-ամյակին

Կոմիտասագիտության մեջ ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը, որը, լինելով կոմիտասագիտության կենտրոնը, տասնամյակներ շարունակ անմնացորդ ծառայում է կոմիտասյան ժառանգության ուսումնասիրության ու հանրահռչակման գործին:

Օրերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Կոմիտասի Երկերի ժողովածուի երկրորդ հրատարակության առաջին հատորը, որն ընդգրկում է Կոմիտասի մենեդջերը՝ դաշնամուրի նվագակցությամբ:

Իսկ ամեն ինչ սկսվել էր տասնամյակներ առաջ: 1949 թվականի սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիային: Ակադեմիայի Նախագահությունը 1950 թ. հունվարի 25-ի N 4 նիստում որոշում է 1950-ին սկսել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Խմբագրական հանձնախմբում ընդգրկվում են Ռոբերտ Աթայանը, Մուշեղ Աղայանը, Մամոն Գասպարյանը, Քրիստափոր Քուշնարյանը, Մաթևոս Մուրադյանը: Նույն՝ 1950 թվականին, ՀԽՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորը հրատարակում է Կոմիտասի «Ազգագրական ժողովածուն»:

Ինչպես հայտնի է՝ իրենց հիմնական մասով Կոմիտասի «թղթերը» (այսպես է անվանվել նրա ամբողջ գրավոր ժառանգությունը) պահվել են Պոլսի Պատրիարքարանում: Այդ մասը հետո հանձնվել է Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովին, որը կոմիտասյան մի շարք կարևոր ձեռագրեր ձեռք է բերել նաև առանձին անհատներին:

Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացման համար, բնականաբար, անհրաժեշտ էր Երևան տեղափոխվել կոմիտասյան ձեռագրերը, որոնք Երևան հասան ՀԽՍՀ ԳԱ Արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ Ռուբեն Զարյանի և գիտքարտուղար Մաթևոս Մուրադյանի, հետագայում՝ Ռոբերտ Աթայանի ու Փարիզի կոմիտասյան հանձնաժողովի փոխնախագահ, իսկ Արշակ Չոպանյանի մահից հետո՝ նախագահ Մարգարիտ Բաբայանի ջանքերով: Ինչպես հետագայում կխոստովանի Մ.Բաբայանը Փարիզի Սովետական դեսպանատան Մշակութային կապերի ներկայացուցիչ Վասիլի Վլասովը՝ «դիրտութեամբ եւ անկեղծ հետաքրքրութեամբ յարաբերութիւն ստեղծեց Երեւանի հայկական Գիտութիւնների Ակադեմիայի Արուեստների Պատմութեան եւ տեսաբանութեան բաժնի եւ Փարիզի Կոմիտասեան Յանձնախումբի միջեւ»:

Մ.Բաբայանի արխիվում գտնվող՝ նրան ուղղված Ռոբերտ Աթայանի 13 նամակներում (1960-1963 թթ.) ուրվագծվում է, թե ինչպես է հավաքվել Կոմիտասի արխիվը

Երևանում և ինչպես են իրականացվել աշխատանքները Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության ուղղությամբ:

Իր առաջին նամակում՝ թվագրված 1960թ. մարտի 6-ով, Ռ. Աթայանը խոստովանում է, որ Կոմիտասի Երկերի ակադեմիական մանրամասն ծանոթագրված հրատարակությունը համարում է իր կյանքի կարևորագույն նպատակը: Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է նրանց նամակագրության միջով: Տարիներ անց՝ 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակում կարդում ենք. «Չնայած այս բազմապիսի գործերիս, ամենակարևորը ինձ համար համարում եմ Կոմիտասի ժառանգությունը հրատարակելու աշխատանքը»:

Ռ. Աթայանը գրում է, որ «այդ հրատարակությունը պետք է ընդգրկի այն բոլորը, ինչ որ մինչև այժմ հաջողվել է և ընթացքում կհաջողվի հավաքել Կոմիտասի ժառանգությունից: Գործը, ճիշտ է, դանդաղ է առաջ գնում, որովհետև նյութերն, ինչպես գիտեք, լրիվ բարեկարգ վիճակում չեն և ինքնըստինքյան էլ մի դժվարին գործ է, որին շտապողականությունը կարող է վնասել: Բայց տարվում է գործը հիմնովին: Մենք ձգտում ենք Կոմիտասի ժառանգությունը երևան հանել հնարավորին չափ լրիվ և ամենակարևորը՝ հարազատորեն, այնպես, ինչպես գրել է մեծ վարպետը: Հույս ունեմ, որ այս տարվա մեջ լույս կտեսնի I հատորը, որ վաղուց արդեն, ինչպես ասում են, «մամուլի տակ է»:

Եվ ահա 1960 թվականին՝ «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի կողմից» երկրէզու (հայերեն և ռուսերեն) առաջաբանով, Ռոբերտ Աթայանի խմբագրությամբ, Մարտիրոս Մարյանի ֆորագույ լույս է տեսնում Կոմիտասի Երկերի ժողովածուի 1-ին հատորը:

Հետագա տասնամյակների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների մի քանի սերունդներին, մասնավորապես Ռոբերտ Աթայանի և Գևորգ Գյոդակյանի ջանքերի շնորհիվ հրատարակվեցին Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 14 հատորները (1960-2006 թթ.):

Կոմիտասի Երկերի ժողովածուի հրատարակությունն ունեցավ բացառիկ ռազմավարական նշանակություն կարևոր դեր կատարելով Կոմիտասի ժառանգության ուսումնասիրության, համակարգման և հանրահռչակման գործում:

Անցած տասնամյակների ընթացքում սպառվեց առաջին հատորների տպաքանակը՝ թեև 1-ին հատորի տպաքանակը եղել է 2700 օրինակ: Մյուս կողմից՝ վերջին տարիներին աշխարհում զգալիորեն աճել է հետաքրքրությունը Կոմիտասի ստեղծագործության հանդեպ: Ուստի առաջ եկավ Կոմիտասի Երկերի ժողովածուի վերահրատարակության անհրաժեշտության հարցը:

2021 թվականին հունիսին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանի ընկերակցությամբ ՀՀ ԳԱԱ

ԿՈՄԻՏԱՍԿԻՏՈՒԹՅՈՒՆ-ՆՈՒՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նվիրվում է Կոմիտասի ծննդյան 155-ամյակին


արվեստի ինստիտուտ այցելեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին աշխատակից, ներկայումս ամերիկաբնակ երաժշտագետ Դավիթ Դերոյանը: Պարզվեց, որ 1993 թվականին ԱՄՆ մշտական ​​​​բնակության մեկնած Ռ. Աթայանը շարունակել է իր աշխատանքը Կոմիտասի Երկերի ժողովածուի 1-6 հատորների վրա: Հիմնվելով համերգային հայտագրերի, կոմիտասյան ծոցատետրերում առկա տարբերակների, երգերի մշակման ոճային էվոլյուցիայի վրա՝ պրոֆեսոր Աթայանը պարզել էր, թե միննույն երգի բազմաթիվ տարբերակներից որն է վերջին կատարյալը: Հատորներում փոփոխել էր նաև երգերի թվաքանակը՝ օրինակ՝ 1-ին հատորի հին հրատարակությունում պարունակվող մեներգերը 40-ն են, 2-րդ հատորում դրանց ընդհանուր թիվն է 53 (49 մեներգ և Կոմիտասի հորինած 4 մեներգեր):

Ռ. Աթայանը խմբագրված հատորները, երբևիցե հրատարակելու ակնկալիքով, հանձնել էր իր սան Դավիթ Դերոյանին: Դավիթ Դերոյանն էլ իր Ուսուցչի պատգամը իրականացնելու հաստատ համոզմունքով հատորները բերել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ:

Ուստի որոշվեց ձեռնամուխ լինել Կոմիտասի Երկերի ժողովածուի 2-րդ լրամշակված հրատարակության իրականացման աշխատանքներին, որի ֆինանսական աջակցությունն ստանձնեցին Գլենդեյլում (ԱՄՆ) գործող «Լարք» երաժշտական ակադեմիան և նրա ղեկավարը՝ ամերիկահայ ճանաչված երաժիշտ, երաժշտական-հասարակական գործիչ Վաչե Պարսումյանը, ինչպես նաև Ռ. Աթայանի ընտանիքը, մասնավորապես նրա դուստր Նազելի Աթայանը:

Անշուշտ, Վաչե Պարսումյանը վճարական դեր է կատարել կոմիտասյան երաժշտական ​​​​ժառանգության ակադեմիական հրատարակության գործում: Եթե խորհրդային տարիներին՝ 1960-1982 թթ. 1-6 հատորները, բնականաբար, հրատարակվեցին պետության միջոցներով, ապա անկախության շրջանում հաջորդ հատորները պիտի հրատարակվեին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բարեկամների ֆինանսական օգնությամբ: Հենց Վաչե Պարսումյանի նյութական աջակցությամբ էլ հրատարակվեցին Կոմիտասի Երկերի ժողովածուի 12-րդ (2003), 13-րդ (2004) և 14-րդ (2006) հատորները:

Եվ ահա՝ Կոմիտասի ծննդյան 155-ամյա հորեյանի առիթով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց վերահրատարակել Կոմիտասի Երկերի ժողովածուն և հաստատեց Կոմիտասի Երկերի ժողովածուի երկրորդ հրատարակության խմբագրական խորհուրդը, որի կազմում ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատակիցները՝ արվեստագիտության դոկտորներ, պրոֆեսորներ Աննա Ասատրյանը, Աննա Արևշատյանը, Լիլիթ Երնջակյանը և Մհեր Նավոյանը, արվեստագիտության թեկնածուներ Գայանե Ամիրաջյանը, Տաթևիկ Շախկույանը և Մարիաննա Տիգրանյանը, ինչպես նաև արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Մահակյանը: Առաջին



հատորի հրատարակության նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով՝ Աննա Ասատրյան, Լիլիթ Երնջակյան, Աննա Արևշատյան, Մհեր Նավոյան, Լուսինե Մահակյան:

64 տարի անց, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի կողմից» երկրագու (հայերեն և անգլերեն) առաջաբանով, Ռոբերտ Աթայանի խմբագրությամբ, Մարտիրոս Մարյանի ֆորագուով վերահրատարակվեց Կոմիտասի Երկերի ժողովածուի 1-ին հատորը, որը հրատարակության պատրաստեց Դավիթ Դերոյանը: Հատորն ընդգրկում է Կոմիտասի մեներգերը: Նյութի հիմնական մասը հայկական գեղջկական ֆոլկլորի հետ կապված կոմիտասյան մեներգերն են: Նշանակալի տեղ են գրավում քնարական նմուշները («Քելե, քելե», «Քելեք, ցոլեք», «Գարուն ա», «Չինար ես», «Հարբան», «Հոյ, Նազան իմ», «Հով արեք», «Միրանի ծառ» են), պանդխտության («Անտունի», «Գանչե, կռունկ» են), պատմավիպական («Մոկաց Միրզա»), կենցաղային («Օրոր») երգերը:

Հատորում տեղ են գտել Կոմիտասի ռոմանսները ևս Լերմոնտովի (Գյոթեից) խոսքերով գրված «Գիշերերգը» և Թումանյանի տեքստով գրված «Մուր էր երկինքը» ռոմանսը: Հատորը եզրափակվում է հանգամանալից ծանոթագրություններով:

Վստահ եմ՝ երկրորդ հատորը շատ չի ուշանա:

Նվիրվում է Կոմիտասի ծննդյան 155-ամյակին

Հեղինակի մասին. ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՍՏՐՅԱՆ (ծնվ. 01.09.1968, ք. Երևան), երաժշտագետ: ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է ԵՊԿ վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը (1992 թ.), ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան (2001, գիտական ղեկավար՝ Գ. Շ. Գրոդակյան): Դասավանդել է Երևանի Ռ.Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում (1991-2002 թթ.): 2002-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող (2002-2003 թթ.), գիտքարտուղար (2003-2005 թթ.), տնօրենի տեղակալ (2005-2021 թթ.) և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (2021-ից): Ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի (2009-2016 թթ.) և Երաժշտության (2016-ից) բաժինների վարիչ: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար (2003-2014 թթ.), անդամ (2014-2021 թթ.) և նախագահ (2021-ից): ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի գիտքարտուղար (2004-ից): ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի «Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր (2019-ից): Տիգրան Չուխաճյան հիմնադրամի նախագահ (2002-ից), Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի փոխնախագահ (2010-ից), ՀԿՄ անդամ (2013-ից), վարչության անդամ (2017-ից) և խորհրդի անդամ (2022-ից): ՀՀ Հանրային խորհրդի անդամ (2009-2018 թթ.), Երևան քաղաքի առաջին (2009-2013 թթ.), երկրորդ (2013-2017 թթ.) և երրորդ գումարումների ավագանու անդամ (2017-2018 թթ.): Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական ներկայացուցչական ժողովի պատգամավոր Արարատյան հայրապետական թեմից (2014 թ., 2017 թ.): Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ (2015-ից), Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի գիտական խորհրդի անդամ (2022-ից): Հեղինակ է 11 մենագրության և շուրջ 220 գիտական հոդվածների, որոնք նվիրված են նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրությանը: Ա. Ասատրյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 ատենախոսություն:

Сведения об авторе: АННА ГРИГОРЬЕВНА АСАТРИАН (род. 1 сентября 1968 г., Ереван), музыковед, Заслуженный деятель искусств Армении, доктор искусствоведения, профессор. Окончила: вокально-теоретический факультет ЕГК им. Комитаса (1992), аспирантуру Института искусств НАН РА, рук. Г.Ш. Геодакян (2001). Работала: преподавателем Ереванского музыкального училища имени Р. Меликяна (1991-2002); научным сотрудником (2002-2003), ученым секретарем (2003-2005), заместителем директора (2005-2021) и и.о. директора (с 2021) Института искусств НАН РА, заведующая отделом искусства армянской диаспоры и международных связей (2009-2016) и музыки (с 2016) Института искусств НАН РА. Ученый секретарь (2003-2014), член (2012-2021), председатель (с 2021 года) ученого совета Института искусств НАН РА. Ученый секретарь специализированного совета 016 Искусствоведение ВАК РА (с 2004), действующего в Институте искусств НАН РА. Главный редактор "Искусствоведческого журнала" Института искусств НАН РА (с 2019). Председатель Фонда Тиграна Чухаճյան (с 2002), вице-президент Академии проблем гуманизма (с 2010), член Союза композиторов Армении (с 2013), член правления (с 2009) и Совета (с 2022) Союза композиторов Армении. Член Общественного совета Республики Армения (2009-2018), член Совета Старейшин первого (2009-2013), второго (2013-2017) и третьего (2017-2018) созывов г. Еревана. Делегат Церковного представительного собрания Армянской Апостольской Церкви от Араратской Патриаршей епархии (2014, 2017). Член ученого совета Музея-института Комитаса (с 2015), член ученого совета Дома-музея Арама Хачатуряна (с 2022). Автор 11 монографий и около 220 научных статей, посвященных исследованию армянской музыки нового и новейшего времени. Под научным руководством А.Асатрян защищены. 15 кандидатских диссертаций.

About the author: ANNA GRIGOR ASATRYAN (born in 1968, Yerevan). Musicologist, Honored Art Worker of Armenia, Doctor of Arts, professor. Graduated from the Faculty of Singing and Music Theory at Yerevan State Komitas Conservatory (1992). In 2001 she has completed post graduate studies at the Institute of Arts of the NAS of Armenia (academic supervisor G. Geodakyan). In 1991-2002 has been teaching at Yerevan Romanos Melikyan Music College. A. Asatryan has been working at the Institute of Arts of the NAS of Armenia as a researcher (2002-2003), academic secretary (2003-2005), deputy director (2005-2021) and acting director (since 2021). In 2009-2016 she has been the head of the Department of Art of Armenian Diaspora and International Relations, and the head of the Department of Music at the Institute of Arts of the NAS of Armenia. She has been academic secretary (2003-2014), a member of the Academic Council of the Institute of Arts of the NAS of Armenia (2012-2021), and its Chair (since 2021). Academic Secretary of the Specialized Council on Art History (016) of the Supreme Certifying Committee at the Institute of Arts of the NAS of Armenia (since 2004). Since 2019 she is the Chief Editor of Art History Magazine published by the Institute of Arts of the NAS of Armenia. Since 2002 she is the Chair of the Tigran Chukhajian Foundation; Vice President of the Academy of Humanitarian Studies (since 2010). Since 2013 she is the member of the Union of Composers of Armenia; the member of its Board (2017) and the Council (2022). Anna Asatryan has been a member of the Public Council of the RA (2009-2018), member of the Council of Elders of the First (2009-2013), Second (2013-2017) and Third (2017-2018) terms in Yerevan Municipality. In 2014 and 2017 she was the delegate from Araratian Pontifical Diocese at the Armenian Apostolic Church Representative Assembly. She is the member of the Academic Council of the Komitas Museum Institute (since 2015); the member of the Academic Council of the Aram Khachaturyan House Museum (since 2022). Anna Asatryan is the author of 11 monographs and around 220 research articles on modern and contemporary Armenian music. Fifteen PhD dissertations were defended under Asatryan's academic supervision.